

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ (Վանատուր)

ԵՐԳ ԽԱՂԱՂՈՒԹԱՆ

Ո՛հ, չեմ կրնար երգել պայքար եւ չեմ որ,
 Ոչ որոտում թնդանթի լեռնէ լեռ.
 Ներողութեամբ կը բարախէ սիրտս այսօր
 Ամբողջ մարդիկ կոչելով ինձ եղբայրներ:
 Թող դան ըմպեն սրտիս ակէն սիրաբուխ,
 Եւ աղբիւրն այս կիզիչ ամբան չի ցամքիր.
 Ու ես լալով փարիմ իրենց սրտաբուխ
 — Ո՛վ իմ եղբայր, սուրբ, ըսեմ, պատեան դիր:
 Մանգաղ շինենք այդ պողպատեայ շեղբերով,
 Ատոք է հասկն, հնձող չըկայ կորովի.
 Սարերն են լի առանց հովուի հօտերով,
 Սըրինդ շինենք հրացանիդ փողն երկաթի:
 Ու սաղաւարտդ ալ դործածենք զերդ բաժակ.
 Կը սպասէ արդ զեղին ողկոյն չընձանին.
 Ես ըլլամ ձեր զինեցողքին մատրուակ,
 Արժուկ արժուկ թասերն իրար թող բախին:
 Զանգեր շինենք թնդանթի պըղինձով
 Որ մեզ օրհնեն առաւօտէն երեկոյ.
 Տարբեր լեզու, բայց մարդկային նոյն սրտով
 Խօսքի նստինք վըրանին տակ Աստուծոյ:
 Արտերն են արդ խոսքանցած ու ծարաւ,
 Ըռումբերով պատուեն հողին սիրտն յորդուն,
 Հաղար ամու կաղմեն թող մեր կառարչաւ,
 Եւ յաղթանակն ըլլայ անանց բերկրութիւն:
 Գարունն երբ դայ ամէնուրեք ծաղիկներ
 Կաղմեն դունեան հարսանեկան առադաստ.
 Երկինքը ջինջ, բուրումնաւէտ ըստուերներ,
 Տօնենք մէկտեղ օրերն այս մեր բարերաստ:
 Ու ձեռք ձեռքի պըսակ կաղմած աշխարհին,
 Վարդերն ինչպէս հովտէ հովտ կ'երկարին,
 Նայինք յոյսով այն եօթնադոյն դըրօշին,
 Որ մեզ օրհնեց, սահման դըրաւ անէծքին:
 Ոչ, չեմ կրնար երգել պայքար եւ չեմ որ,
 Ոչ որոտում թնդանթի լեռնէ լեռ.
 Ներողութեամբ կը բարախէ սիրտս այսօր
 Ամբողջ մարդիկ կոչելով ինձ եղբայրներ:

ԱՂՕԹՔ

Քու առջեւ եմ, ո՛վ Տէր, ձեռքերս տարածած,
 Մինչդեռ արիւն կը բարձրանայ սարերէն.
 Այսօր ալ ինձ շընորհեցիր լոյս եւ հաց
 Հրեշտակներուդ ըսիր որ զիս վեր բռնեն:

Արդ չեմ փնտռեր քարէ շինուած տաճարներ,
 Ո՛չ խունկերու անուշահոտ պաղատանք.
 Կուրծքս սեղան, մատներս տասնեակ ճըրպաներ,
 Որոնց վըրայ ես ողջակէզ պատարալ:

Ամէն առտու քեզ կ'ընծայուի տիեզերք
 Որուն Դուն ես զոհադործող քահանան.
 Ո՞ր մարդկային ըմբռնեց միտքն այս համերդ
 Այնքան խորին, երկնէ երկին բաղմածայն:

Քեզ կը նայի դաշտերու մէջը մըշակ
 Որուն աղօթքն է ցորենի փոխարկում.
 Քրտինքն է սուրբ, սուրբ է ամէն մէկ վառտակ
 Եւ ամէն տեղ քու սուրբ անունդ է դրոշմած:

Ինձ համար լոկ ըստեղծեցիր ամէն բան,
 Լեռներն ինձ բարձ եւ անկողին՝ փափուկ ծով.
 Արեւուն մէջ կապոյտի խորն անսահման
 Կը յայտնուի միշտ դորովոտ աչքերով:

Գեղեցկութիւնն՝ Արդարութեան սուրբ հանդերձ
 Հիւսեցիր դու զերդ ծիրանի ոսկեծիր.
 Բընութեան մէջ քեզ աւելի կը զգամ մերձ
 Որովհետեւ լոյսով կ'իջնես միշտ երկիր:

Եւ ուղեցիր որ ես ըլլամ օրհներգու
 Քարին, հողին, աստղերուն տեղ անբարբառ.
 Մատեան կաղմեմ տարածութիւն ծովերու
 Եւ ճաճանչներ առնեմ թեւիս տակ քընար:

Շունչ մ'ամէն օր թըռիչք կու տայ հողիւս
 Որ ոչ օդ է, ոչ հովերու արշաւանք.
 Քու ձեռքերդ են որ զգուելու կու դան զիս
 Արշալոյսէն վերջ փոխութեով արեւակ:

Ա՛հ, մինչեւ ե՞րբ խոնարհադոյն աղբիւրէն
 Պիտի առնեմ իմաստութեան խրատներ.
 Եւ մինչեւ ե՞րբ ծաղիկներն ինձ պիտ'ըսեն,
 — Սուրբ է այստեղ, մարդկային շուք մի՛ ձըղեր:

Քու զօրութեամբդ առուն քարէն կը բըխի,
Արծիւն օդին մէջ կը թռչի աներկիւղ.
Գիտէ վրտակն իր ճամբանէ՛րը դադանի,
Հովերուն մէջ մայրին կու տայ նոր ընծիւղ:

Ո՞ր մարդկային լեզուն երգեց քու փառքերդ
Տերեն ինչպէս փափուկ հոգին լարին տակ.
Ո՞վ սրտին մէջ մաքուր պահեց քու պատկերդ,
Ինչպէս մոռցած լեռներուն մէջը լրճակ:

Խոնարհութիւնն Աւետարան ինձ տըւիր
Որ բարձունքներ լուսաւորութիւն մտքերու.
Ես անանց եմ, մինչ դուն կ'անցնիս, ինձ ըսիր,
Հոգը սիրէ երջանկութեամբ ապրելու:

Ես կը ցանեմ թուխ կոշտերուն մէջ հատիկ,
Ու կը հանես Դուն ոսկի հասկ բերանուր.
Քրտինքներս յորդ դուն կը համբոս միշտ լըռիկ,
Երբ ափիդ մէջ կ'իյնան շիթերն իր խոշոր:

Կը խօսիս դու ամենուրեք ինձի հետ
Եւ իմ աչքերս հրաշալիքով կը լեցուին.
Կը սիրեմ քեզ եւ կը դողամ անունէդ
Ըստուերն ինչպէս ճաճանչներէն արեղին:

Ափերուս մէջ դուն վառեցիր բուրեան խունկ,
Եւ կոչեցիր քեզի տաճար կենդանի.
Ու մեղքերուս ըրիր աղի ջուրն արցունք
Որ սրտիս մէջ պատկերը միշտ նորոգուի:

Տուր երջանիկ ինձ առաւօտ յոյսերու,
Եւ երեկոն յողնած մարմնիս հանդրբուսն.
Երբոր երկնի մէջն հանդիպինք իրարու
Թող ամէն ինչ փոխուի Սիրոյ անվախճան:

Ս Ո Ւ Ա Կ Ը

Երբ երեկոն կը մեղմանայ լըռութեամբ,
Աղօթքն երբոր թեւեր կու տայ դանդերուն,
Վըրադ քաջած ըստուերներու թաւիչ ամպ
Կապոյտին դէմ կ'երգես սրտիդ քաղցրութիւն:

Պէտք է մարի հառաչն յետին սիւքերուն,
Վերջին սօսափն անտառներու մէջ հեռուն.
Պէտք է լըռէ մարդադետնի մէջ առուն,
Որ դուն հիւսես երգերու երգն հեշտադոյն:

Կ'ուզես որ ձայնդ իջնէ պուրակ առ պուրակ,
Հասնի մինչեւ մըթին հիւղեր եւ բանտեր.
Ո՞վ տրամութեան սեւ թեւերով հըրեշտակ,
Ո՞ր սրտերուն չըմեղմեցիր թախիծներ:

Ձի դառնար երգդ առանց խորունկ դանդիւնի
Վարդերուն մէջ առանց անոյշ յուզումի.
Երբ մեր պատրանքն արեւուն հետ կը մարի,
Դուն կ'ըլլաս մեր Սայեաթ-Նովան սիրելի:

Ա՛հ, չես զիտեր թէ ո՞րքան սիրտ խրոսկած
Կը խնդրէ որ չըլերջանայ երեկոն.
Ո՛չ արեղակն եւ ոչ լուսինն արծաթուած,
Կ'ընդարձակեն այնքան սրտին հորիզոն:

Կը հոլովես հաղարաւոր դեղդեղանք,
Որքան չունի մարդկային սիրտը տենչանք.
Որքան չունի ովկեանն ալիք եւ ծրփանք.
Ի՞նչպէս ըլլայ սիրտըս քեզի արձադանդ:

Ձայնըդ լոյս է՝ ալիքն ինչպէս լուսին տակ.
Սըրինդն ինչպէս սիրակարօտ հովիւին.
Կապոյտին մէջ թըրթըռացող հըրեշտակ,
Որուն թեւերն ոսկի քընար կը կոչուին:

Պատուհանները դադանօրէն կը բացուին,
Վասնզի մեղմ չըջուին ալ քեզ կը սպառնայ.
Պէտք է միջոցն ըլլայ տաճար մ'երկնային,
Որ ձայնդ ազատ կամար կամար վերանայ:

Եւ երեկոն երբեք այնքան քաղցրը չէ
Թէ հորիզոնն ըլլար միայն ծիրանի.
Քաղցրը ձայնիդ նոյնիսկ Աստուած կը սպասէ,
Օրհնելով քեզ հրեշտակներէն աւելի:

(Իր նորատիպ «Խեղճ մարդկութիւն» հատորին)